ԿԱՐԾԻՔ

Թ.00.01 – «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ
փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցող Մարինե Կարապետի Շահբազյանի՝ «Արդի հասարակության տեղեկատվայնացման շարժիչ ուժերը և տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրը. սոցիալ-փիլիսոփայական վերլուծություն» թեմայով ատենախոսության մասին

Ժամանակակից փիլիսոփայական հետազոտությունների շարքում բավականին լայն տեղ են սկսել զբաղեցնել սոցիալ-փիլիսոփայական հետազոտությունները: Իսկ արդի հասարակության սոցիալ-փիլիսոփայական հետազոտություններում ավելի ու ավելի հաճախ են առաջին պլան մղվում անվտանգության հիմնախնդիրները՝ պայմանավորված նոր ի հայտ եկած մարտահրավերներով: Հասարակական անվտանգության այն հատվածը, որը վերաբերում է տեղեկատվական անվտանգությանը մի շարք նվիրյալների շնորհիվ հնարավորինս մանրամասն ուսումնասիրվում է, սակայն հարցի միջգիտակարգային, փիլիսոփայական համալիր ուսումնասիրություն ըստ էության գոյություն չունի: Սույն ատենախոսությունը մասամբ ուղղված է հենց այս բացը լրացնելուն:

Ըստ էության, պաշտպանության ներկայացված ատենախոսության նպատակը հետխորհրդային հասարակություններում, և ամենից առաջ ՀՀ-ում, տեղեկատվական անվտանգության համակարգի գործոնների ձևավորման և զարգացման օրինաչափությունների բացահայտումն է և այդ առումով երաշխավորությունների մշակումն ու առաջարկների ներկայացումը:

Ատենախոսության առավելությունների շարքում աչքի է զարնում հատկապես այն հանգամանքը, որ հեղինակն ուսումնասիրել է բավականին մեծ ծավալի գիտական գրականություն, ինչը ընդգծվում է ատենախոսությունում առկա հղումների, հարուստ գրականության ու այլ պաշարների քանակով:

Հեղինակի առաջադրած և հիմնավորած նորույթների շարքում արժանի են հիշատակման հետևյալ դրույթները.«անհրաժեշտ է Հայաստանում մշակել տեղեկատվական հակամարտությունների դրսևորումների և մեխանիզմների բացահայտման ավելի լայն «կոնցեպտուալ ցանց», երբ «տեղեկատվական հակամարտություն» հասկացությունը հարստացվում է մի շարք լրացուցիչ բնութագրիչներով», «արդի փուլում անհրաժեշտ է մշակել տեղեկատվական անվտանգության ապահովման դինամիկ մոդելներ», «աշխարհում ընդհանրապես, և սփյուռքում հատկապես, Հայաստանի տեղեկատվական ազդեցության արդյունավետության ամրապնդումը անհրաժեշտ է դիտել որպես ոչ միայն ՀՀ տեղեկատվական քաղաքականության ռազմավարական կարևորագույն ռեսուրսը, այլև ազգաշահ գործընկերության հիմունքներով համահայկական ջանքերի

կորդինացման ու համախմբման կարևորագույն գործոնը», դրույթները, որոնք գործնականում արծարծվող հիմնախնդրի հետագա մշակման բավականին հաջող մեկնակետ կարող են հանդիսանալ:

Բայց և այնպես, ատենախոսության մեջ նկատվել են հետևյալ թերացումներեն ու վրիպումները.

1. էջ 26-ում հեղինակը բերում է այսպիսի միտք. «Իսկ ազգային անվտանգության ապահովման հիմնական սուբյեկտը ազգային պետությունն է, որն այդ բնագավառում իր գործառույթներն արդյունավետորեն իրականացնում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների մարմինների միջոցով»: Եվ հղում է տալիս ՀՀ նախագահի 2007թ.-ի հրամանագրին: Չենք կարծում, որ տվյալ մտքի լավագույն հղումն է ընտրված:
2. էջ 38-ում, հեղինակն օգտագործում է փիլիսոփայության հանրագիտարանային բառարանի (Философский энциклопедический словарь) սահմանումը, այն է. «Информация (от лат. о «разъяснение, представление, понятие о чём-либо» informare «придавать вид, форму, обучать; мыслить, воображать») — сведения независимо от формы их представления»: Սակայն ուշագրավ է, որ և՛ Информация , և сведения եզրույթները թարգմանվել են որպես «տեղեկատվություն»: Կարծում ենք, որ կարելի էր դրանցից մեկը թարգմանել «տեղեկություն», կամ գտնել որևէ այլ թարգմանություն:
3. էջ 63-ում «ցանցային հասարակության» առանձնահատկությունների մասին խոսելիս, հեղինակը I կետում նշում է ցանցային կազմակերպության անդամների ազատության բարձր աստիճանը, բայց էջ 65-ում, խոսելով ցանցային տեխնոլոգիաների բացասական ազդեցության մասին՝ այդ հասարակության վրա, նշվում է, որ դրանք հասարակությունը դարձնում են ավելի խոցելի՝ ուժեղացող քաղաքական վերահսկողության տեսանկյունից: Կարծում ենք այստեղ հակասություն կա:
4. էջ 74-ում, և էլի մի քանի տեղ, հեղինակն օգտագործում է «ինտերնետ-ժողովրդավարություն» եզրույթը: Կարծում ենք, որ ավելի տեղին կլիներ «համացանցում խոսքի ազատություն» կամ որևէ համարժեք հասկացություն:
5. էջ 79-81-ում հեղինակը խոսում է տեղեկատվական զենքի դրսևորումների մասին, և կենտրոնանում է իրականում միայն համակարգչային անվտանգությանը սպառնացող վտանգների վրա, թվարկելով միայն 7 անուն վտանգներ: Մեր կարծիքով նույնիսկ համակարգչային անվտանգությանը սպառնացող վտանգները չեն սպառվում այս 7-ով, ուստի լավ կլիներ, եթե օգտագործվեր «...և այլ վտանգներ» եզրույթը:
6. էջ 94-ում հեղինակը հիշատակում է Ռ. Ռեյգանին և Ջ. Բուշին այն համատեքստում, որ նրանցից առաջինը ԽՍՀՄ-ը անվանել է «Չարիքի կայսրություն», իսկ երկրորդը՝ «Չարի առանցք»: Իրականում «Չարի առանցք» եզրույթը օգտագործել է Ջորջ Բուշ կրտսերը՝ ոչ թե ԽՍՀՄ-ի, այլ Իրանի, Իրաքի և ԿԺԴՀ-ի մասին խոսելիս, երբ 2002թ.-ի հունվարի 29-ին ելույթ էր ունենում ԱՄՆ-ի Կոնգրեսում: 2005թ.-ին վերջինիս կառավարությունում պետքարտուղարի առաջին տեղակալ Ջոն Բոլթոնը մեծացրեց այս «առանցքը»՝ այնտեղ ներառելով Կուբան, Լիբիան և Սիրիան:

Ինչպես տեսնում ենք, այս եզրույթը որևէ կերպ ԽՍՀՄ-ին կամ նույնիսկ ՌՖ-ին չի առնչվում:

7. Հետաքրքիր մի հանգամանք ենք դիտարկել ատենախոսության շրջանակներում, այն է՝ հեղինակը որևէ կերպ «փափուկ ուժի» գործոնը չի դիտարկում տեղեկատվական անվտանգության համատեքստում: Կցանկանայինք լսել նրա կարծիքը այս հարցի շուրջ:
8. Ատենախոսության մեջ տեղ են գտել մի շարք տեխնիկական բացթողումներ, տառասխալներ ու անճշտություններ, որոնցից ցանկանում ենք հիշատակել ՀՔԾ հապավման փոխարեն ՀԿԾ (էջ 85), տողատակերում՝ որոշ տեղերում գրականության անվան փոխարեն «նույն տեղում» (էջեր 18, 103) և այլն:

Սույն ատենախոսությունն աշխատություն է, որը կարող է գնահատվել իբրև փիլիսոփայության բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում:

Այսպիսով, ուսումնասիրելով ատենախոսությունը և այդ թեմայով հրատարակված աշխատանքները, արձանագրում եմ, որ ատենախոսության թեման արդիական է, գիտական դրույթներն ու եզրակացությունները՝ հիմնավոր, ճշմարիտ ու արդիական, ինչպես նաև հավաստում եմ, որ ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կայքում հրատարակված «Հայաստանի հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերին: Ատենախոսության մեջ արծարծվող հիմնախնդիրների և դրանց լուծման կարևորությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ այն բավարարում է թեկնածուական ատենախոսություններին առաջադրվող պահանջներին, իսկ ատենախոս Մարինե Կարապետի Շահբազյանը արժանի է Թ.00.01 – «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

07.06.2020թ.

Պաշտոնական ընդդիմախոս՝ Աշոտ Արամայիսի Գևորգյան
փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Ա.Գևորգյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՄՀ Գիտական քարտուղար՝ Մ. Իսպիրյան